ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 151-Ա

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-րդ հոդվածի առաջին կետով, 135-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի 02-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի երկրորդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար հաամայնքի Մուսալեռ բնակավայրի Լուի Դարթիժ Դյու Ֆուրնեյի փողոցի թիվ 68 հասցեի բնակչուհի Անի Արսենի Հարությունյանի 2022 թվականի մայիսի 18-ի թիվ 1243 դիմումը, Հայաստանի Հանրապետության Փարաքար համայնքի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի» 2022 թվականի հունիսի 7-ի թիվ 5-րդ նիստի արձանագրությունը. *Որոշում եմ՝*

1.Անի Արսենի Հարությունյանին /ծնված՝ 26.11.1983թ., անձնագիր՝ BA2707788 տրված 20.05.2016թ., 008-ի կողմից/ նշանակել հոգաբարձու՝ անչափահաս Սուսաննա Նշանի Բաղջյանի /ծնված՝ 14.09.2006թ., ծննդյան վկայական՝ ԱԱ114469/ նկատմամբ, իսկ Ստելլա Նշանի Բաղջյանի /ծնված՝ 11.01.2013թ., ծննդյան վկայական՝ ԱԲ244281/ և Սոնա Նշանի Բաղջյանի / ծնված՝ 23.03.2009թ., ծննդյան վկայական՝ ԱԱ 300978/ նկատմամբ՝ խնամակալ:

2.Հսկողություն սահմանել Անի Արսենի Հարությունյանի գործունեության նկատմամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022 թ. հունիսի 09
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 152-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 19-ի թիվ 59-Ա որոշումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող, Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0104-0014 կադաստրային ծածկագրով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Հ. Աճառյան փողոց N 6/2 հողամաս:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 10
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 153-Ա

ԳԱՐԻԿ ԳԱԼՈՒՍՏԻ ԱԲԱՋՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի մայիսի 17-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի մայիսի 18-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022FUNWSP), ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28072021-04-0058 և սեփականատեր Գարիկ Գալուստի Աբաջյանի 2022 թվականի մայիսի 20-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թահիրով գյուղի Արամ Մանուկյան փողոց թիվ 2 հասցեում գտնվող Գարիկ Գալուստի Աբաջյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0530-0029 կադաստրային ծածկագրով արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 449.5 քառակուսի մետր արտաքին մակերեսով անավարտ շինությունը, 29.2 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր անավարտ շինության և պահեստի համար կազմում է 3474 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 1 663 003,80 (մեկ միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար երեք դրամ ութանասուն լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 10

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 154-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ, ՀՀ Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019թ-ի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 28-ի «Փարաքարի գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N 15-Ն որոշմամբ, հիմք ընդունելով սեփականատեր Հրանտ Լևոնի Սարդարյանի 2022 թվականի մայիսի 17-ի դիմումը, ***որոշում եմ***՝

1. Հրանտ Լևոնի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական 23072020-04-0072), Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Թաիրով գյուղում գտնվող 04-094-0406-0084 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.0451 հա մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խաղող, (գոտին՝ Ուրց Կոտայք-Շամիրամ, 3-րդ կարգի խաղող՝ կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 373 դրամ) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման հող: Բնակելի տուն կառուցելու համար:
2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետրին խաղողի համար 6461,3դրամ,) 451 քառակուսի մետրի համար կազմում է 2 914 046,30 (երկու միլիոն ինը հարյուր տասնչորս հազար քառասունվեց դրամ երեսուն լումա) ՀՀ դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքարի համայնքային բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325191139 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ.Թաիրով Սայաթ-Նովա փողոց թիվ 15 հողամաս:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6.Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 10

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 155-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԱՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի կողմից, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի հունիսի 13-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022DIYHPC), շինությունը կատարած անձ Վրեժ Հարությունի Հարությունյանի 2022 թվականի մայիսի 31-ի դիմումը. ***Որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Մուսալեռ գյուղում, 24.0 քառակուսի մետր մակերեսով համայնքային հողամասի վրա գտնվող 24.0 քառակուսի մետր մակերեսով խանութը, ճանաչել Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ –ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Երևանյան փողոց 20/2 խանութ:

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Վրեժ Հարությունի Հարությունյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունը, Վրեժ Հարությունի Հարությունյանին ուղղակի վաճառքով օտարել Արմավիրի մարզ, Փարաքար համայնքի, Մուսալեռ գյուղի, Երևանյան փողոցի N 20/2 հասցեում գտնվող 0,0024 հա մակերեսով հողամասը՝ առկա շինություններով:

4. 24 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես հասարակական կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման և վաճառքի համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր խանութի համար՝ 17721 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 425 304 (չորս հարյուր քսանհինգ հազար երեք հարյուր չորս) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին:

6.Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը՝ 4441.8 դրամ, որը 24 քառակուսի մետրի համար կկազմի 106 603.2 (հարյուր վեց հազար վեց հարյուր երեք դրամ քսան լումա) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 13

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 156-Ա

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա և բ ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «Հաբշին Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի մայիսի 24-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի մարտի 15-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022GWVDSM), սեփականատեր Տիգրան Հակոբի Ալեքսանյանի 2022 թվականի մայիսի 26-ի դիմումը. ***որոշում եմ***՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Այգեստան փողոց թիվ 4 հասցեում գտնվող Տիգրան Հակոբի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0021-0034 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 54.5 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան երկրորդ հարկը, 144.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց օժանդակ շինության նկուղը, 127.1 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց օժանդակ շինությունը, 177.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 5.6 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ավագ Ավագյան Գագիկի» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան, համար կազմում է 2316 դրամ, կիսակառույց օժանդակ շինության, կիսակառույց

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան, համար կազմում է 2316 դրամ, կիսակառույց օժանդակ շինության, կիսակառույց օժանդակ շինության նկուղի և պարսպի համար՝ 1389.6 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 923 991,36 (ինը հարյուր քսաներեք հազար ինը հարյուր իննսունմեկ դրամ երեսունվեց լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 14

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 157-Ա

ՄՈՒՐԱԴ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԵԴՐԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «Հաբշին Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի ապրիլի 13-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Մուրադ Հովհաննեսի Սեդրակյանի կողմից 2022 թվականի մարտի 30-ին տրված լիազորագիրը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի ապրիլի 14-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022OGEEQB), սեփականատեր Մուրադ Հովհաննեսի Սեդրակյանի լիազորված անձ Էդգար Համբարձումի Հարությունյանի 2022 թվականի մայիսի 20-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող Մուրադ Հովհաննեսի Սեդրակյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0044-0033 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 241.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 29.25 քառակուսի մետր մակերեսով ծածկը, 1.7 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Պրոֆ-Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան և ծածկի համար կազմում է 2316 դրամ, 1 քառակուսի մետր պարսպի համար՝ 1389.6 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 630 114,12 (վեց հարյուր երեսուն հազար հարյուր տասնչորս դրամ տասներկու լումա) ՀՀ դրամ:

3. Հողամասին և առկա շինություններին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Ջիվանու փողոց թիվ 18 բնակելի տուն:

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 14

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 158-Ա

ՎԵՐԳԻՆԵ ՌՈՒԲԵՆԻ ՇԱՀԻՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի ապրիլի 25-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի մարտի 14-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022H7J1DG), սեփականատեր Վերգինե Ռուբենի Շահինյանի 2022 թվականի ապրիլի 22-ի դիմումը. որոշում եմ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Անդրանիկի փողոց թիվ 5 հասցեում գտնվող Վերգինե Ռուբենի Շահինյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0130-0027 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 42.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց բնակելի տունը, 2.55 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանը, 7.65 քառակուսի մետր արտաքին մակերեսով թռչնագոմը, 9.22 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ստյոպա Աբգարյան» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր կիսակառույց բնակելի տան համար կազմում է 2316 դրամ, 1 քառակուսի մետր զուգարանի, թռչնագոմի և պարսպի համար՝ 1389.6 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 124 258,03 (հարյուր քսանչորս հազար երկու հարյուր հիսունութ դրամ երեք լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 14

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 159-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման՝ տրված 2022 թվականի հունիսի 9-ին «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի կողմից, և սեփականատեր՝ Արթուր Պարգևի Պետրոսյանի 2022 թվականի հունիսի 8-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Արթուր Պարգևի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-074-0012-0026 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (Առանձնացվող հատված 1)՝ 0.0137 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Նորակերտ, 6-րդ փողոց N 1/1 հողամաս:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (Առանձնացվող հատված 2)՝ 0.0663 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Նորակերտ, 6-րդ փողոց N 1 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 14
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 160-Ա

ՎԱՐԱԶԴԱՏ ԲԱՐՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանարապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 04-094-0572-0015 կադաստրային ծածկագրով հողամասում իրավախախտ Վ. Բարոյանի կողմից առանց համապատասխան թույլտվության և առանց հողամասի նպատակային նշանակությունը փոխելու շինարարական աշխատանքներ՝ խճապատում և բետոնե հիմքերի կառուցում, իրականացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ. Վարազդատ Բարոյանը խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասով և 154-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի և առանց հողամասի նպատակային նշանակությունը փոխելու, Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 04-094-0572-0015 կադաստրային ծածկագրով հողամասում իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, 154-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավախախտման համար՝ այն է. «...պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից երկուհազարապատիկի չափով», ինչի կապակցությամբ Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և

հողաշինության բաժնի պետի ժ/պ Հ. Միքաելյանի 13.05.2022թ. թիվ 5 արձանագրության և 17.05.2022թ. թիվ 1216 զեկուցագրի հիման վրա 2022 թվականի մայիսի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 154-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Հայաստանի Հնարապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին չի ներկայացել իրավախախտող Վարազդատ Բարոյանը: Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը. ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքի վարչական սահմաններում, ապօրինի շինարարությունները կանխարգելելու նպատակով, հերթական ուսումնասիրության /շրջայցի/ ժամանակ Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի աշխատակիցների կողմից Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 04-094-0572-0015 կադաստրային ծածկագրով հողամասում ապօրինի շինարարություն կատարելու մասին 13.05.2022թ. կազմված թիվ 5 արձանագրությունը: Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի 17.05.2022թ. թիվ 1216 զեկուցագիրը: Վարչական հանձնաժողովի 13.06.2022թ. թիվ 3 արձանագրությունը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը. Վարազդատ Բարոյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 04-094-0572-0015 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասում, առանց համապատասխան շինարարական թույլտվության և առանց հողամասի նպատակային նշանակությունը փոխելու, կատարվել է շինարարական աշխատանքներ՝ խճապատում և բետոնե հիմքերի կառուցում, ուստի քննարկվող կառույցը հանդիսանում է ինքնակամ: Նշված հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղ. Անաստասիա Հարությունի Հարությունյանին, գտնվում է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հարակից տարածքում և ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի 08.04.2022թ. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ուղղված գրության համաձայն՝ օդանավակայանի հարակից տարածքում իրականացվող շինարարական աշխատանքները չեն համաձայնեցվել ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի հետ և իրականացվում են ՀՀ կառավարության հետ քննարկվող «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի զարգացման ծրագրով նախատեսված ընդլայնման տարածքում: Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2022 թվականի մայիսի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 հունիսի 6-ին հրավիրված վարչական նիստին ներկայանալու

համար Վարազդատ Բարոյանին 2022 թվականի մայիսի 23-ի N 865 ծանուցումն ուղարկվել է փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ, սակայն առաքանու հետադարձը չլինելու պատճառով, որով պետք է հաստատվեր ծանուցումը ստանալու փաստը, հանձնաժողովի որոշմամբ հանձնաժողովի նիստը հետաձգվել է 13.06.2022թ., նիստի օրվա, ժամի և վայրի մասին իրավախախտին ծանուցելու նպատակով ծանուցումը պետք է հանձվեր ստորագրությամբ՝ առձեռն հանձնելու միջոցով: Այդ նպատակով հունիսի 13-ին հրավիրված վարչական նիստի մասին Վարազդատ Բարոյանին պատշաճ ծանուցու համար Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի մասնագետների կողմից ծանուցումը ստորագրությամբ առձեռն հանձնելու ժամանակ իրավախախտը հրաժարվել է այն ստանալ, ինչի համար ստորագրել է ծանուցման հետևի կողմում, մինչդեռ վերջինիս բանավոր տեղեկացվել է իրավախախտման փաստով հարուցված վարույթի և վարչական հանձնաժողովի 13.06.2022թ. նիստի օրվա, ժամի և վայրի մասին, ուստի համարվում է ծանուցված: Վ. Բարոյանը չի ներկայացել վարչական հանձնաժողովի նիստին: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել Վ. Բարոյանի կողմից ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 154-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով կատարված իրավախախտման վերաբերյալ: Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը. Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Տվյալ պարագայում Վարազդատ Բարոյանը առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի և առանց

հողամասի նպատակային նշանակությունը փոխելու՝ հողամասը ոչ նպատակային նշանակության օգտագործելով, Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 04-094-0572-0015 կադաստրային ծածկագրով հողամասում իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ՝ խճապատում և բետոնե հիմքերի կառուցում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով. 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից երկուհազարապատիկի չափով: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասով, 154-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ և հիմք ընդունելով Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 13.06.2022թ. թիվ 3 արձանագրությունը և Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի ժ/պ -ի կողմից 17.05.2022թ. թիվ 1216 զեկուցագիրը. Որոշում եմ՝

1. Իրավախախտ Վարազդատ Բարոյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 04-094-0572-0015 կադաստրային ծածկագրով հողամասում ապօրինի շինարարական աշխատանքներ՝ խճապատում և բետոնե հիմքերի կառուցելու համար՝ 1.500.000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով, հողամասը ոչ նպատակային նշանակության օգտագործելու համար՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը զանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ զանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325191030 հաշվեհամարին՝ ստացող Փարաքար համայնք:
3. Առաջարկել իրավախախտ Վարազդատ Բարոյանին սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում քանդել, ապամոնտաժել ինքնակամ կառուցը և տարածքը բերել նախնական տեսքի:

4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Իրավախախտ Վարազդատ Բարոյանին նախազգուշացնել, որ համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, եթե շարունակվի իրականացվել ինքնակամ կառույցի շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի ժ/պ-ի վրա:

7. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ/ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022 թ. հունիսի 15
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 161-Ա

ԱՐԱՅԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-րդ հոդվածի առաջին կետով, 135-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի 02-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի երկրորդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան բնակավայրի Մուսալեռի փողոց տուն 15 հասցեում բնակվող Արայիկ Սերոբի Աբրահամյանի 2022 թվականի ապրիլի 15-ի թիվ 763 դիմումը, Հայաստանի Հանրապետության Փարաքար համայնքի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի» 2022 թվականի մայիսի 5-ի թիվ 3-րդ նիստի արձանագրությունը.
ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արայիկ Սերոբի Աբրահամյանին /ծնված 24.06.1975թ. անձնագիր՝ AR0516868 տրված՝ 21.11.2017թ, 009-ի կողմից/ նշանակել խնամակալ անչափահաս՝ Սերոբ Ալեքսանի Աբրահամյանի /ծնված՝ 17.01.2012թ., ծննդյան վկայական՝ ԱԲ341423/, և Աշոտ Ալեքսանի Աբրահամյանի /ծնված՝ 10.03.2015թ., ծննդյան վկայական՝ ԱԲ177330/ նկատմամբ:

2. Հսկողություն սահմանել Արայիկ Սերոբի Աբրահամյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022 թ. հունիսի 16
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 162-Ա

ԱՆՆԱ ԿԱՌԼԵՆԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի 02-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի առաջին ենթակետի ա) պարբերությամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Աբովյան փողոցի 22 տան հասցեի բնակչուհի Աննա Կառլենի Մելիքյանի հունիսի 1-ի թիվ 1424 դիմումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ԱՐԴ1/0587/02/21 քաղաքացիական գործով 11.03.2022թ. վճիռը՝ Մխիթար Գնելի Հովհաննիսյանին և Վարդան Գնելի Հովհաննիսյանին անգործունակ ճանաչելու և նրանց նկատմամբ խնամակալություն նշանակելու մասին, Հայաստանի Հանրապետության Փարաքար համայնքի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի» 2022 թվականի հունիսի 7-ի թիվ 5-րդ նիստի արձանագրությունը.

Որոշում եմ՝

1. Աննա Կառլենի Մելիքյանին /ծնված 18.10.1966թ., անձնագիր՝ AR0468296, տրված՝ 29.09.2017թ., 057-ի կողմից, ՀԾՀ 6810660178/ նշանակել խնամակալ՝ Մխիթար Գնելի Հովհաննիսյանի /ծնված 22.03.1994թ., անձնագիր՝ AU0610492, տրված՝ 08.02.2022թ., 057-ի կողմից, ՀԾՀ 3203940116/ և Վարդան Գնելի Հովհաննիսյանի/ ծնված՝ 20.06.1995թ., անձնագիր AU0609000 տրված՝ 07.02.2022թ. 057-ի կողմից, ՀԾՀ 3014950238/ նկատմամբ:

2. Հսկողություն սահմանել Աննա Կառլենի Մելիքյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022 թ. Հունիսի 17
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 163-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման՝ տրված 2022 թվականի հունիսի 2-ին «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի կողմից և սեփականատեր Մարիա Պետրոսի Առաքելյանի 2022 թվականի հունիսի 9-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի վարչական սահմաններում գնտվող՝ Մարիա Պետրոսի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 04-065-0011-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (Առանձնացվող հատված 1)՝ 0.0839 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, 5-րդ փողոց 1-ին նրբանցք N 7 բնակելի տուն:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (Առանձնացվող հատված 2)՝ 0.0151 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, 5-րդ փողոց 1-ին նրբանցք N 7/1 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 17
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 164-Ա

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի N 02062022-04-0082, N 29042022-04-0063 վկայականները և Սոնա Սինարայի Նազարյանի 2022 թվականի հունիսի 13-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Մուսալեռ գյուղի Շառլ-Տիրան Թեքեյան փողոց 2/7 և Մուսալեռ գյուղի Երիտասարդական փողոց 15/1 հասցեներում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքին տալ մեկ միասնական հասցե. Արմավիրի մարզի Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Երիտասարդական փողոց թիվ 15/1 բնակելի տուն:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 17
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 165-Ա

ԿԱՐԻՆԵ ՎԱՀԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «Ա.Ռ.Մ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի հունվարի 25-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի հունիսի 9-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022HBWQJR), սեփականատեր Կարինե Վահանի Հակոբյանի 2021 թվականի հունվարի 29-ի դիմումը. ***որոշում եմ***՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Մայրաքաղաքային փողոց 1-ին փակուղի թիվ 4 հասցեում գտնվող Կարինե Վահանի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0079-0029 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 32.37 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 4.67 քառակուսի մետր արտաքին մակերեսով աստիճանավանդակը, 10.83 քառակուսի մետր մակերեսով պարիսպը և մեկ ինքնակամ բացված դուռը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԱՐՏԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան և աստիճանավանդակի համար կազմում է 2725 դրամ, 1 քառակուսի մետր պարսպի համար՝ 1635 դրամ, մեկ ինքնակամ բացված դռան համար՝ 2725 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 121 366,05 (հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր վաթսունվեց դրամ հինգ լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 17

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2022 թվականի N 166-Ա

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի N 09062021-04-0055, N 29032021-04-0034 վկայականները և Վահրամ Տելեմաքի Մարգարյանի 2022 թվականի մայիսի 24-ի դիմումը. ***որոշում եմ***՝

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Մերձավան գյուղի Արցախ թաղամասի 1-ին փողոց թիվ 2 և Մերձավան գյուղի Արցախ թաղամասի 4-րդ փողոց թիվ 2 հասցեներում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքին տալ մեկ միասնական հասցե. Արմավիրի մարզի Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Արցախ թաղամասի 1-ին փողոց թիվ 2 հողամաս:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. հունիսի 17
գ.Փարաքար